Նիավիրա ամենայն մասամբ խեղճ է քան զՍալա-տները անկարգ և աղքատին, զուրկ բուսականու-թենէ, եկեղեցին թէպէտ նորաշէն և աղիւսա-կերտ, այլ աղքատին ներսի կողմէն. վարժատան մէջ 37 բոկոտն աշակերտք, միով բանիւ ամենայն ինչ տխուր և ճնշիչ ազդեցութիւն ունեցաւ իմ վրայ։ Եթէ շուտով եկեղեցւոյն երեցը Տէր Յովհան-նէս Տէր-Սիմոնեան համակրելի քահանայն չգար չհանէր՝ անմխիթար և կոտրած սրտով հարկ պի-տի լինէր ինձ մեկնելու 'ի գիւղէն։ Հին նոր՝ ինչ որ կար եկեղեցւոյն մէջ յետ միանգամ աչքէ ան-ցընելու, գնացինք Տէր-Հօր անպատմայն բնակարա-նը, որ ոչ հեռի յեկեղեցւոյն՝ բարձրէն գիւղին վրայ կը հայէր։ Տէր Յովհաննէս վաթանամեայ ոմն է. թէպէտ ըստ վկայելոյ անձին հիւանդոտ ոմն, որ արտաքուստ չէր ցուցընել, սակայն և այնպէս զը-ւարթ և հարտարախօս բնութեան տէր. անչուշտ շնորհիւ զուարթ բնաւորութեան՝ համբերութեամբ կը տանէր իւր ոչ նախանձելի վիճակին։

Ծուխը աղքատ, առողջութիւնը կորսնցուցած։ գեղ տեղ, ուր դարման և ճար կը պակասի, և որ մեծն է՝ զուրկ այն մխիթարութենէն, որով քա-ջալերուած շատ երեցունք անտանելեաց կը համ-բերեն, այն է ունկնդրութիւն և հպատակութիւն հօտին։ Տէր Յովհաննէս այս ամէն բանէ զրկուած՝ «Ա.յսօր եթէ մեռնիմ՝ ցաւելու բան չունիմ, աչքս յօժարութեամբ կը փակեմ» կը զրուցէր։ Վշտա-կից եղայ վշտամբեր Տէր տիրոջ, միանգամայն հե-տաքրքրութիւնս կը շարժէր լսել իմանալ քանի մի տեղեկութիւնք, և եթէ յորում մասին էր Տէր-Հօր ուելի վիշտը. այլ հարցնել ինձ անպատշաճ կ'երևնար, որ չլինի նոր վշտաց լինիմ պատճառ։